ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   1) Թամարա Թորոսյան
   2) Ժորա Սարգսյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալ
   2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ), 2025 թվականի հունվարի 26-30

   Հրավիրող կողմը.

   Համաշխարհային բանկ
4. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն՝ Աշխատաշուկայի ակադեմիա 2025-ին և Աշխատաշուկայի երկրորդ գլոբալ համաժողովին:
5. **Քննարկված թեմաները.**
   - ✓ Աշխատաշուկաների ուսումնասիրություն հայեցակարգային և էմպիրիկ հետազոտությունների միջոցով
   - ✓ Ավելի մեծ, որակյալ և ներառական զբաղվածություն ապահովելու ռազմավարությունների մշակում
   - ✓ Փաստացի տվյալների վրա հիմնված և աշխատաշուկայի պայմաններին համապատասխանող ծրագրերի մշակում
   - ✓ Սոցիալական պաշտպանության և աշխատանքային քաղաքականության ինտեգրում

- ✓ Աշխատաշուկայում ծառայությունների մատուցման հարմարվողական համակարգերի ստեղծում
- ✓ Կանանց հզորացում աշխատաշուկայում
- ✓ Աշխատանքի ոչ ստանդարտ ձևերի կիրառում՝ աշխատողներին պաշտպանելիս
- ✓ Աշխատանքի արտադրողականության բարձրացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաշուկայի ակադեմիա 2025-ի ընթացքում մասնակից երկրները Համաշխարհային բանկի հրավերով ներկայացրել են աշխատաշուկայի իրավիճակը և հետագա զարգացման ուղղությունները: Մասնակցում էին 27 երկրի զբաղվածության ոլորտի ներկայացուցիչներ:

Աշխատաշուկայի երկրորդ գլոբալ համաժողովին պանելային քննարկումների ընթացքում ելույթ են ունեցել մասնակից երկներից բանախոսներ, այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

Մասնակցել ենք կարիերայի ուղղորդում-կամպուս աշխատանքային խմբի քննարկումներին:

Հանդիպել ենք Աշխատաշուկայի և զբաղվածության, տվյալների հավաքագրման տեխնոլոգիական կենտրոնի՝ «Տակամոլ» ընկերության ներկայացուցիչներին, որոնք մանրամասն ներկայացրել են ընկերության էլեկտրոնային հարթակները և ակտիվ քննարկման ընթացքում ստացել հետաքրքրող հարցերի պատասխաններ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկումների և հանդիպումների ընթացքում պայմանավորվություններ են ձեռք բերվել ակտիվացնել համագործակցությունը աշխատաշուկայի տվյալների, էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերի համակարգի ներդրման և այլ հարցերի շուրջ:

Աշխատաշուկայի ակադեմիա 2025-ի շրջանակներում ստացել ենք մասնակցության վկայականներ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում նախատեսվում է ներդնել էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերի թվային հարթակ՝ առաջարկվում է համագործակցության զարգացման և լավագույն փորձի կիրարկման շրջանակներում սկսել առցանց հանդիպումներ «Տակամոլ» ընկերության հետ՝ ՀՀ-ում ներդրվող համակարգի ներդրման (մշակման) գործընթացը լավագույնս ապահովելու համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Թ. Թորոսյան

Ժ.Սարգսյան

05.02.2025թ.